


Օբոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԳՅՈՒՂԱՑՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ  
ՈՐԻՆԱԿԻԵԼԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հեղումված հարգածային կոլտնտեսականների Համա-  
միուրենական յերկրորդ համագումարի կողմից յեկ  
հաստատված ԽՍՀՄ-ը ժողովրդական Կոմիտարների  
Խռ.քիրդի ու Համ. Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի  
կողմից 1935 թվի գետրվարի 17-ին



Գ Ե Տ Հ Բ Ա Տ

1938

Տ Ե Ր Ե Վ Ա Ն

17 FEB 2010

38-Ա  
Վա2896

Պրուետարթեր բոլոր յերկրների, միացե՛ք

338-1

9-68


ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ

ՈՐԻՆԱԿԵԼԻ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդունված հարվածային կոլտնտեսականների Համա-  
միուրենական յերկրորդ համագումարի կողմից յևկ  
հաստատված ԽՍՀՄ-ի ժողովրդական Կոմիտարների  
Խորհրդի ու Համ. Կ (ք)Կ Կենտրոնական Կոմիտեյի  
կողմից 1935 թվի փետրվարի 17-ին

II հրատարակություն



29762

20.03.2013

ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ԿՈԼՏՆՑԵՍՍԿԱՆՆԵՐԻ  
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆՍԻՄՆ ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱ-  
ԳՈՒՄԱՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

I

1. Հավանություն տալ համագումարի հանձնաժողովի ներկայացրած «Գյուղատնտեսական արտելի որբնակելի կանոնադրությանը»:

2. Անհրաժեշտ համարել, վոր միութենական ու ավտոնմամ հանրապետությունների ժողկոմիուրչները, ինչպես և ազգային մարդկարի գործկոմները անհապաղ մայրենի լեզվով թարգմանեն «Գյուղատնտեսական արտելի որբնակելի կանոնադրությունը» և առաջածեն կոլտնտեսականների մեջ:

3. Առաջարկել բոլոր գյուղատնտեսական արտելներին, յերեք ամսվա ընթացքում, «Գյուղատնտեսական արտելի որբնակելի կանոնադրության» հիման վրա՝

(ա) մշակել իրենց արտելի կմնոնադրությունը.



373-82

բ) քննարկել ու հաստատել այն արտե-  
թի անդամների ընդհանուր ժողովում, ան-  
դամների առնվազն <sup>2/3</sup>-ի ներկայությամբ.  
գ) արտելի կանոնադրությունը գրանց-  
ման յերթարկել խորհուրդների շրջանային  
գործադիր կոմիտեյում:

## II

Ենդրել կուսակցության կենտրոնական  
կոմիտեյին և ԽՍՀՄ ժողովրդական կոմի-  
տելի ներթափելիքի 1937 թվին Մոսկվա-  
յում կազմակերպել Համամիութենական  
ոյուղատնտեսական ցուցահանդես այն  
հաշվով, վոր հետագայում այդ ցուցահան-  
դեսի տերիսորիան, շենքերն ու կահավո-  
րությունն ուղարկործվեն կոլոնտեսու-  
թյունների Համամիութենական Տուն կա-  
ռուցելու համար:

ԴՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ  
ՈՐԻՆԱԿԵԼԻ

## ԿԱՆՈՆ ԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդունված հարգածային կոլոնտեսականների Համա-  
միութենական յերկորդ համագումարի կողմից յե-  
նասատված ԽՍՀՄ-ի ժողովրդական Կմիութեների  
Խորհրդի ու Համ. կ (բ) Կ Ենթական Կոսիտեյի  
կողմից 1935 թվի փետրվարի 17-ին

## I

### ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. . . . .  
գյուղի (ստանիցայի, խու-  
տորի, զշաղի, առուի) աշխատավոր գյու-  
ղացիները կամավոր կերպով միանում,  
կազմում են գյուղատնտեսական արտել,  
վորպեսդի արտադրության ընդհանուր մի-

Չոցներով և կաղմակերպված ընդհանուր աշ-  
խատանքով կառուցեն կոլեկտիվ, այսինքն՝  
հանրային տնտեսություն, ապահովեն լիա-  
կատար հաղթանակ կուլակի դեմ, բոլոր  
չահագործողների ու աշխատավորության  
թշնամիների դեմ, ապահովեն լիակատար  
հաղթանակ կարիքի ու խավարի դեմ, մանր  
անհատական տնտեսության հետամնացու-  
թյան դեմ, ստեղծեն աշխատանքի բարձր  
արտադրողականություն և այդպիսով ապա-  
հովեն կոլտնտեսականների լավագույն  
կյանքը:

Կոլտնտեսային ուղին, սոցիալիզմի ու-  
ղին, միակ ճիշտ ուղին և աշխատավոր գյու-  
ղացիների համար: Արտելի անդամները  
պարտավորվում են ամրացնել իրենց ար-  
տելը, աշխատել աղնվորեն, բաժանել կոլ-  
տնտեսային յեկամուտն ըստ աշխատանքի,  
պահպանել հանրային սեփականությունը,  
պահպանել կոլտնտեսային ունեցվածքը,  
պահպանել տրակտորներն ու մեքենանե-

քը, կաղմակերպել ձիու լավ ինամքը, կա-  
տարել իրենց բանվորագյուղացիական պե-  
տության առաջաղբանները և այդպիսով  
զարձնել իրենց կոլտնտեսությունը բուհ-  
վիկյան և բոլոր կոլտնտեսականներին՝ ու-  
նեվոր:

## II

### ՀԱՂԻ ՄԱՍԻՆ

2. Վոչնչացվում են բոլոր միջնակները,  
վորոնք առաջ բաժանում եյին արտելի ան-  
գամների հողաբաժինները, և բոլոր զաշ-  
ային հողաբաժինները վեր են ածվում  
միասնական հողային մասսիվի, վորը կո-  
ւեկտիվ կերպով ողբազործում և որտելը:

Արտելի զբաղեցրած հողը (ինչպես և  
ամեն մի հազ ԽՍՀՄ-ում) համաժողովրդա-  
կան ոլետական սեփականություն է: Այդ  
հողը բանվորագյուղացիական ոլետության  
որենքներով ամրացվում է արտելին՝ ան-  
ժամկետ ողբազործման համար, այսինքն՝

Ընդմիջութեակա չե վոչ ոռ ու ծախիք,  
վոչ ել արտելի կողմից վարձու արվե-  
լու:

Խորհուրդների ըրջանային գործադիր  
կոմիտեն յուրաքանչյուր արտելի տալիս և  
պետական մի ազգ՝ հողն անժամկետ ող-  
տադործելու համար: Այդ ակտում վորոշ-  
վում են արտելի ողտագործած հողի չափի  
ու ճիշտ սահմանները, ընդվորում այդ հո-  
ղերի կրծատում չի թույլատրվում, այլ  
թույլատրվում է միայն ավելացնել դրանք՝  
կամ պետական ֆոնդի ազատ հողերի հաշ-  
վին կամ թե մենատնտեսների զբաղեցրած  
ավելորդ հողերի հաշվին, այն պայմանով,  
վոր արտելի հողաշերտերի մեջ վոչ մի այլ  
հողաշերտ չմտնի:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի անսու-  
սության անձնական ողտագործման համար  
հանրայնացված հողերից հատկացմում և  
փոքր հողակտոր, վորաց անամերձ հողա-  
մաս (բանջարանոց, պարտեզ):

Կոլտնտեսականի անտեսության կողմից

անձնապես ոգտագործելի անամերձ հողա-  
մասի չափը (չհաշված բնակելի շենքերի  
բոնած հողը), կարող է լինել մի քառորդ  
հեկտարից մինչև կես հեկտար, իսկ առան-  
ձին ըրջաններում նաև մինչև մեկ հեկտար,  
նայած մարզային ու ըրջանային պայման-  
ներին, վորոնք սահմանում են միութենական  
հանրապետությունների հողժողկոմատնե-  
րը՝ ԽՍՀՄ Հողժողկոմատի ցուցումների  
հիման վրա:

3. Արտելի միասնական հողային մաս-  
սիվը վոչ մի դեպքում չպետք ե պակասի:  
Արգելվում է արտելից դուրս յեկած ան-  
դամներին հող հատկացնելի հաշիվ ար-  
տելի հողային տարածության: Արտելից  
դուրս յեկողները կարող են հող ստանալ  
միմիայն պետական հողային ֆոնդի ազատ  
հողերից:

Արտելի հողերը բաժանվում են դաշտե-  
րի՝ հաստատված ցանքաշրջանառության  
համաձայն: Ցանքաշրջանառության դաշ-  
տերում դաշտավարական յուրաքանչյուր

քրիզադին մշտական հողամաս և ամրաց-  
վում ցանքաշրջանառության ամբողջ ժա-  
մանակաշրջանի համար :

Անասնապահական խոշոր ֆերմաներ ու-  
նեցող կոլտնտեսություններում անհրաժեշ-  
տության գեղքում բավականաչափ հող  
լինելիս կարելի յէ առանձնացնել վորոշ  
հողամասեր, վորոնք ամրացվում են ֆեր-  
մային և ողտագործվում են ֆերմայի ա-  
նասունների համար կերպույնել ցանելու  
նպատակով :

### III

## ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՅՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4. Հանրայնացվում են՝ բոլոր բանող  
անասունները, գյուղատնտեսական ինվեն-  
տարը (գութանը, չարքացանը, փոցինը,  
կալսիչը, հնձիչը), սերմացվի պաշարնե-  
րը, կերի միջոցները՝ հանրայնացված ա-  
նասունները պահպանելու համար անհրա-  
ժեշտ քանակությամբ, արտելային տնտե-

սությունը վարելու համար անհրաժեշտ  
տնտեսական շենքները և գյուղատնտեսու-  
թյան մթերքները վերամշակող բոլոր ձեռ-  
նարկությունները :

Զեն հանրայնացվում և մնում են կոլ-  
տնտեսականի տնտեսության անձնական ող-  
տագործման համար՝ բնակելի շենքերը,  
նրա անձնական անասուններն ու թռչուննե-  
րը և կոլտնտեսականի տնտեսության անձ-  
նական ողտագործման անասունների պահ-  
պանության համար անհրաժեշտ տնտեսա-  
կան շենքերը :

Գյուղատնտեսական ինվենտարը հանրայ-  
նացնելիս, արտելի անդամներին մնում և  
անձնապես ողտագործելու համար գյու-  
ղատնտեսական այն մանր ինվենտարը, վո-  
րըն անհրաժեշտ և տնամերձ հողամասում  
կատարվելիք աշխատանքի համար :

Արտելի վարչությունն անհրաժեշտ գեղ-  
քում հանրայնացված բանող անասուններից  
առանձնացնում ե մի քանի ձի՝ արտելի

բրիւտադին մշտական հողամաս և ամրաց-  
վում ցանքաշընառության ամբողջ ժա-  
մանակաշընանի համար :

Անասնապահական խոչոր ֆերմաներ ու-  
նեցող կոլտնտեսություններում անհրաժեշ-  
տության գեղքում բավականաչափ հող  
լինելիս կարելի յէ առանձնացնել վորոշ  
հողամասեր, վորոնք ամրացվում են ֆեր-  
մային և ողտագործվում են ֆերմայի ա-  
նասունների համար կերարույսեր ցանելու  
նպատակով :

### III

#### ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4. Հանրայնացվում են՝ բոլոր բանող  
անասունները, գյուղատնտեսական ինվեն-  
տարը (գութանը, շարքացանը, փոցին,  
կալսիչը, հնձիչը), սերմացվի պաշարնե-  
րը, կերի միջոցները՝ հանրայնացված ա-  
նասունները պահպանելու համար անհրա-  
ժեշտ քանակությամբ, արտելային տնտե-

սությունը վարելու համար անհրաժեշտ  
տնտեսական շենքները և գյուղատնտեսու-  
թյան մթերքները վերամշակող բոլոր ձեռ-  
նարկությունները:

Զեն հանրայնացվում և մնում են կոլ-  
տնտեսականի տնտեսության անձնական ոգ-  
տագործման համար՝ բնակելի շենքերը,  
նրա անձնական անասուններն ու թոչուննե-  
րը և կոլտնտեսականի տնտեսության անձ-  
նական ողտագործման անասունների պահ-  
պանության համար անհրաժեշտ տնտեսա-  
կան շենքերը:

Գյուղատնտեսական ինվենտարը հանրայ-  
նացնելիս, արտելի անդամներին մնում և  
անձնապես ողտագործելու համար գյու-  
ղատնտեսական այն մանր ինվենտարը, վո-  
րըն անհրաժեշտ և տնամերձ հողամասում  
կատարվելիք աշխատանքի համար :

Արտելի վարչությունն անհրաժեշտ գեղ-  
քում հանրայնացված բանող անասուններից  
առանձնացնում ե մի քանի ձի՝ արտելի

անդամների անձնական կարիքները վճարով սպասարկելու համար :

Արտելը կազմակերպում է խառն անասնապահական ապրանքային ֆերմա, կամ մեծ քանակությամբ անասուններ լինելու դեպքում՝ մի քանի մասնագիտացված անասնապահական ապրանքային ֆերմաներ :

5. Հացահատիկային, բամբակացան, ճակնդեղացան, վուշացան, կանեփացան, կարտոֆիլացան – բանջարաբուծական, թեյաբուծական ու ծխախոտապորձական շրջաններում յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսությունը կարող է անձնական ոգտագործման համար ունենալ մի կով, մինչև յերկու գլուխ յեղջյուրավոր անասունի մատղաւ, մի մայր խող իր ճագերով, կամ յեթե կոլտնտեսության վարչությունն անհամաժեշտ գտնի՝ յերկու մայր խող իրենց ճագերով, մինչեւ տաս վոչխար ու այծ միասին, անսահմանափակ քանակությամբ թուչուն ու ճագար և մինչև 20 փեթակ։ Այդ շրջանների թվին են պատկանում որինակ Ղազախստանի քոչվորային շրջաններին վոչ սահմանակից հողագործական շրջանները, Բելոռուսիայի անտառային շրջանները, Աւելիանայի՝ Զերնիգովի ու Կիևի մարզերի անտառային շրջանները, Արևմտյան Սիբիրի յերկրի Բարարինի տափաստանի շրջանները և Մերձ-Ալթայան շրջանները, Ռժակի մարզի շրջանների իշխմի ու Տոբոլ-ակի խմբերը, Բաշկիրիայի լեռնային մասը, Արեվելյան Սիբիրի արեվելյան մասը, Հեռավոր Արևելյան յերկրի հողագործական շրջանները, Հյուսիսային յերկրի շրջանների վոլոգդայի և Խոլմոգորյան խմբերը :

Զարգացած անասնապահություն ունեցող

հողագործական շրջաններում յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսությունն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 2-3 կով և բացի դրանից մատղաշներ, 2-ից մինչեւ 3 մայր խող իրենց ճագերով, 20-25 վոչխար ու այծ միասին, անսահմանափակ քանակությամբ թուչուն ու ճագար և մինչեւ 20 փեթակ։ Այդ շրջանների թվին են պատկանում որինակ Ղազախստանի քոչվորային շրջաններին վոչ սահմանակից հողագործական շրջանները, Բելոռուսիայի անտառային շրջանները, Ավելիանայի՝ Զերնիգովի ու Կիևի մարզերի անտառային շրջանները, Արևմտյան Սիբիրի յերկրի Բարարինի տափաստանի շրջանները, Ռժակի մարզի շրջանների իշխմի ու Տոբոլ-ակի խմբերը, Բաշկիրիայի լեռնային մասը, Արեվելյան Սիբիրի արեվելյան մասը, Հեռավոր Արևելյան յերկրի հողագործական շրջանները, Հյուսիսային յերկրի շրջանների վոլոգդայի և Խոլմոգորյան խմբերը :

Վոչ քոչվոր ու կիսաքոչվոր անասնապահության ըրջաններում, վորտեղ հողագործությունը փոքր նշանակություն ունի, իսկ անասնապահությունը վճռական դեր է խաղում տնտեսության մեջ, յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 4-ից մինչև 5 կով և բացի դրանից մատղաշներ, 30-ից մինչև 40 վոչիսար ու այծ միասին, 2-3 մայր խոզ իրենց ձագերով, անսահմանափակ քանակությամբ թռչուն, ձագար, մինչև 20 փեթակ, ինչպես և մի ձի, կամ կումիս տվող մի զամբիկ, կամ յերկու ուղարկամ կամ յերկու եշ, կամ յերկու ջորի: Այդ ըրջանների թվին են պատկանում որինակ՝ Ղաղախստանի քոչվոր ըրջաններին սահմանակից Ղաղախստանի անասնապահական ըրջանները, Թուրքմենիայի, Տաջիկստանի, Կարակալպակիայի և Կիրգիզիայի անասնապահական ըրջանները, Ոյորթյան, Խակասյան, Բուրիաթ-Մոնղոլիայի արելմըտյան մասը, Կալմիկների ինքնավար

մարզը, Հյուսիսային Կովկասի— Դաղըստանի ինքնավար ԽՍՀ-ի, Զեչենո-ինդուստրիայի, Կարաբողինո-Բայկարիայի, Կարաչայի և Ոսեթյան ինքնավար մարզերի լեռնային ըրջանները, ինչպես և Աղբբեկանի, Հայաստանի ու Վրաստանի լեռնային ըրջանները:

Քոչվոր անասնապահության ըրջաններում, վորտեղ հողոգտակործությունը համարյա վոչ մի նշանակություն չունի, իսկ անասնապահությունը հանդիսանում է տնտեսության համապարփակ ձեր, յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն կարող է անձնական ոգտագործման համար ունենալ 8-10 կով և բացի դրանից մատղաշներ, 100-150 վոչիսար և այծ միասին, անսահմանափակ քանակությամբ թռչուն, մինչև 10 ձի, 5-8 ուղարկամ կամ կաղախստանի քոչվորական ըրջանները, Նազարա-

ւի շրջանը, Բուրիաթ-Մոնղոլիայի քոչվո-  
րական շրջանները:

IV

ԱՐՏԵԼԻ ՅԵՎ. ՆՐԱ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ԴԱՐԾՈՒԻՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ

6. Արտելը պարտավորվում է իր կոլեկ-  
տիվ տնտեսությունը լարել պլանով, ճշ-  
տիվ կատարելով բանվորա-գյուղացիական  
կառավարության որդանների սահմանած  
դյուդանետեսական արտադրության պլան-  
ները և արտելի պարտավորությունները  
պետության հանդեպ:

Արտելն ընդունում է ճշտորեն կատարե-  
լու համար ցանքի, ցելի, շարամեջ մշակ-  
ման, բերքահավաքի, կալսելու և աշնա-  
նավարի պլանները, վորոնք կազմվում են  
կոլտնտեսությունների դրությունն ու ա-  
ռանձնահատկությունները հաշվի առնելով,

— ինչպիս և անասնապահության զարգաց-  
ման պետական պլանը:

Արտելի վարչությունը և բոլոր անդամ-  
ները պարտավորվում են—

ա) բարձրացնել կոլտնտեսային դաշտե-  
րի բերքատվությունը, մացնելով և պահ-  
պանելով կանոնավոր ցանքաշրջանառու-  
թյուն, խորը հերկ, վոչնչացնելով մոլախո-  
տերը, ընդարձակելով ու լավ մշակելով  
ցելերն ու աշնանավարը, ժամանակին ու  
խնամքով կատարելով տեխնիկական բույ-  
սերի շարամեջ մշակումը, ժամանակին  
բուկ տալով բամբակը, պարարտացնելով  
հողը՝ թե անասնապահության ապրանքային  
ֆերմանների և թե կոլտնտեսականի տնտե-  
սության դոմադրով, հանքային պարարտա-  
նյութերով, պայքար մղելով գյուղատնտե-  
սական վնասատուների դեմ, ժամանակին  
ու խնամքով հավաքելով բերքն առանց կո-  
րսութի, պահպանելով ու մաքրելով վոռո-  
ղիչ կառուցումները, պահպանելով անտառ-  
ները, տնկելով գարսերը պահպանով ան-



տառաշերտեր, խստիվ պահպանելով տեղական հողային որդանների սահմանած ազգութելիքի կան հանդիպահանած ազգութելիքի կան հանդիպահան կան կանոնները.

բ) ցանքի համար ընտրել լավագույն սերմեր, մաքրել դրանք ամեն տեսակի աղբից, պահպանել հափշտակումից ու փչացումից, պահել դրանք մաքուր ողափոխվող շենքերում, ընդարձակել տեսակավոր սերմացվի ցանքերը.

գ) ընդարձակել ցանքերի տարածությունը՝ ողտագործելով արտելի տնօրինության տակ գտնված ամբողջ հողը, բարելավելով և մշակելով բարձիթող արված հողերը, հերկելով խոպան հողերը և կիրառելով ներկուտնտեսային հողաշինարարություն.

դ) հանրային հիմունքներով լրիվ ոգտագործել արտելին պատկանող ամբողջ քաշող ուժը, ամբողջ ինվենտարը, գյուղատնտեսական գործիքները, սերմացուն և արտադրության մյուս միջոցները, ինչպես և այն բոլոր արակտորները, շարժիչները,

կալսիչները, կոմբայնները և մյուս մեքենաները, վոր բանվորա-գյուղացիական պետությունը մեքենատրակտորային կայանների միջոցով՝ վորպես ողնություն տալիս և կոլտնտեսություններին, կազմակերպել հանրայնացված կենդանի ու մեռյալ ինվենտարի ճիշտ խնամքը, աշխատելով, վոր կողեկտիվ տնտեսության մեջ անասուններն ու ինվենտարը լավ դրության մեջ լինեն.

ե) կազմակերպել անասնապահական ֆերմաներ, իսկ վորտեղ հնարավոր և նաև ձիարուծական ֆերմաներ, ավելացնել անսունների թիվը և բարելավել անասունների ցեղն ու մթերատվությունը ֆերմաներում, արտելային արտադրության մեջ ազնվորեն աշխատող անդամներին ողնություն ցույց տալ՝ կով և մանր անասուն ձեռք բերելու գործում, ցեղական բարելավված արտադրողներով սպասարկել վոչ միայն ֆերմաների անասուններին, այլև արտելի անդամների կողմից անձնապես ոգտագործող անասուններին, պահպանել սահմանված

զոտուելինեկական և անասնաբուժական կա-  
նոնները.

գ) ընդարձակել կերաքույսերի արտադր-  
ությունը, բարելավել մարդագետիններին  
ու արոտավայրերը, ողնություն ցույց տալ  
հանրային արտադրության մեջ բարեխղճո-  
րեն աշխատող արտելի անդամներին, ապա-  
հովելով նրանց համար, վորտեղ այդ հան-  
րավոր ե՝ կոլտնտեսային արոտավայրերից  
ուղարկելը, ինչպես և ըստ հնարավորության  
կեր տալով՝ նրանց անձնական ուղտագործ-  
ման անասունների համար ի հաշիվ աշխա-  
րերի.

է) զարգացնել գյուղատնտեսական արտա-  
դրության մյուս րոլոր ճյուղերը՝ համա-  
ձայն տեղի բնական պայմանների և տնայ-  
նագործական զբաղմունքները՝ համաձայն  
չըջանի պայմանների, պահպանել ու մաք-  
րել գոյություն ունեցող լճակները, կառու-  
ցել նորերը և զարգացնել նրանց մեջ ձրկ-  
նատնտեսություն.

ը) կաղմակերպել անտեսական ու հանրա-

յին շենքերի շինարարությունը հանրային  
հիմունքներով.

թ) բարձրացնել արտելի անդամների աշ-  
խատանքային վորակավորումը, ոժանդակել  
կոլտնտեսականներին՝ նրանցից բրիգադիր-  
ներ, արակտորավարներ, կոմբայնավար-  
ներ, շոփերներ, անասնաբուժակներ  
ու սանիտարներ, ձիապաններ, խոզապաններ,  
անասնապահներ, հովիվներ, նախրապահն-  
եր, խրճիթ-լաբորատորիաների աշխատող-  
ներ պատրաստելու գործում.

ժ) բարձրացնել արտելի անդամների  
կուլտուրական մակարդակը, արմատացնել  
թերթը, գիրքը, սադիոն, կինոն, ստեղծել  
ակումբներ, գրադարաններ և ընթերցա-  
րաններ, ունենալ բաղնիքներ, վարսավիրա-  
նոցներ, սարքավորել լուսավոր ու մաքուր  
կայաններ գաշտում, կարգի բերել գյուղի  
փողոցները, փողոցներում տնկել զանազան,  
առանձնապես պտղատու ծառեր, աջակցել

կոլտնտեսականներին՝ բարելավելու և զարգացնելու իրենց բնակարանները.

Ժա) ներդրավել կանանց կոլտնտեսային արտադրության և արտելի հասարակական կյանքի մեջ, ընդունակ և փորձված կոլտնտեսուհիներին առաջ քաշելով ղեկավար աշխատանքի, ըստ հետարավորության թեթևացնելով նրանց տնային աշխատանքը՝ մսուրներ, մանկական հրապարակներ և այլն ստեղծելու միջոցով:

## V

### ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

7. Արտելի անդամի ընդունելությունը կատարում է ընդհանուր ժողովը, վորք հաստատում է վարչության կողմից մտցըլված նոր անդամների ցուցակները:

Արտելի անդամ կարող էն դառնալ բոլոր աշխատավորները՝ 16 տարեկանից սկսած,

ինչպես կանայք, այնպես ել տղամարդիկ:

Արտելի մեջ չեն ընդունվում կուլակները և ընտրական իրավունքներից զրկված բոլոր անձինք:

Ծանօթություն. — Այս կանոնից թույլատրվում է բացառություն անել՝  
ա) ձայնազուրկների այն զավակների վերաբերմամբ, վորոնք մի շաբք տարիների ընթացքում զրադշած են հանրոգուա աշխատանքով և աշխատում են բարեխղճորեն.

բ) նախկին այն կուլակների ու նըրանց ընտանիքի անդամների վերաբերմամբ, վորոնք արտաքսված լինելով հակախորհրդային և հակակոլտնտեսային յելույթների համար, իրենց նոր ընտրակավայրերում յերեք տարվա ընթացքում իրենց ազնիվ աշխատանքով և Խորհրդային իշխանության ձեռնար-

կումմներին ոժանդակելով ցույց են  
տվել, վոր իրենք ուղղվել են:

Այն մենատնտես գյուղացիները, վորոնեք  
արտել մտնելուց առաջ յերկու տարվա ըն-  
թացքում վաճառել են իրենց ձիերը և սեր-  
մացու չունեն, արտել են ընդունվում այն  
պայմանով, վոր պարտավորվեն իրենց յե-  
կամունկրից մինչև վեց տարի ժամանա-  
կամիջոցում մաս-մաս մուծել ձիու արժեքը  
և օերմացուն՝ բնամթերքով:

8. Անդամների վտարումն արտելից կա-  
րող է կատարվել միմիշայն արտելի անդամ-  
ների ընդհանուր ժողովի վորոշմամբ, վո-  
րին ներկա յե արտելի անդամների ընդ-  
հանուր թիվի ասնվազն յերկու յերրորդ մա-  
սր: Արտելի անդամների ընդհանուր ժողո-  
վի արձանագրության մեջ անդաման մատ-  
նանշվում ե ժողովին ներկա գանվող կոլ-  
տնտեսականների թիվը և վտարելու համար  
քիե արվաների թիվը:

Այն դեպքում, յերբ արտելի անդամը  
խորհուրդների ըրջանային գործադիր կո-

միտելին բողոքում ե իր վտարման գեմ,  
հարցը վերջնականապես լուծում ե խոր-  
հուրդների ըրջանային գործադիր կոմիտեյի  
նախադահությունը՝ արտելի վարչության  
նախադահության մինչև վեց տարի ժամանակամիջությամբ:

## VI

### ԱՐՏԵԼԻ ՄԻՋԱՑՆԵՐԸ

9. Արտել մտնողները պետք ե մուծեն  
մուտքի վճար դրամով 20—40 ռուբլի յու-  
րաքանչյուր տնտեսության համար, նայած  
նրանց տնտեսության կարողությանը:  
Մուտքի վճարները մտցվում են արտելի  
անդամների ֆոնդի մեջ:

10. Արտելի անդամների հանրայնացված  
դույքի արժեքի բանող անասուններ, ին-  
չենար, տնտեսական չենքեր և այլն),  
մի քառորդից մինչև կեսը հատկացվում ե

արտելի անբաժանելի Փոնդին, ըստ վորում  
անբաժանելի կապիտալին տրվող հատկաց-  
ման ավելի բարձր տոկոս ե կիրառվում ա-  
վելի ուժեղ տնտեսությունների նկատմամբ:  
Գույքի մնացած մասը մտցվում ե արտելի  
անդամի փայտավճարի մեջ:

Վարչությունն արտելի կազմից դուրս  
յեկող անդամների հաշիվները մաքրում և  
նրանց փայտավճարը վերադարձնում ե դրա-  
մով, ընդվորում արտելից դուրս յեկողին  
կարող ե հողաբաժն տրվել միմիայն ար-  
տելի հողային տարածության սահմաններից  
դուրս: Հաշվետեսը, վորակն կանոն, կա-  
տարգում ե տնտեսական տարին վերջանա-  
լուց հետո:

11. Արտելն իր ստացած բերքից և անսո-  
նապահության մթերքներից՝

ա). կատարում ե սետության հանդեպ  
մթերք հանձնելու և սերմվարկերը վերա-  
դարձնելու իր ունեցած պարտավորու-  
թյունները, մեքենատրակտորային կայանին  
բնամթերքով վճարում ե մեքենատրակտո-

բային կայանի կատարած աշխատանքի հա-  
մար որենքի ուժ ունեցող կնքված պայմա-  
նագրի համաձայն, կատարում ե կոնտրակ-  
տացիայի պայմանադրերը.

բ) սերմացու յե առանձնացնում ցանքի  
համար և կեր՝ անասուններին կերակրելու  
համար ամբողջ տարվա պահանջի չափով:  
ինչպես և անբերիությունից ու կերի պա-  
կասությունից ապահովելու համար ստեղ-  
ծում ե անձեռնմինելի, տարեցտարի վե-  
րականգնվող սերմի ու կերի Փոնդ՝ տարե-  
կան պահանջի 10—15%-ի չափով.

գ) ընդհանուր ժողովի վորոշմամբ հա-  
տուկ Փոնդ և ստեղծում հաշմանդամներին,  
ծերերին, ժամանակավորապես իրենց աշ-  
խատունակությունը կորցրածներին, կար-  
միր բանակայինների կարիքավոր ընտանիք-  
ներին, մանկամառներին ոգնելու և վոր-  
բերի պահպանման համար. այս բոլորը  
պիտի կազմի ընդհանուր արտադրանքի յեր-  
կու տոկոսից վոչ ավելին.

դ) արտելի անդամների ընդհանուր ժո-

դովի վորոշած չափով հատկացնում ե մը-  
թերքների մի մասը՝ պետությանը կամ  
շուկայում վաճառելու համար.

ե) արտելի բերքի և նրա անառնապահու-  
թյան մթերքների մնացած ամբողջ մասսան  
արտելը բաշխում ե իր անդամների մեջ՝  
ըստ աշխորերի:

12. Արտելն իր ստացած դրամական յի-  
կամուռներից՝

ա) պետությանը տալիս ե որենքով սահ-  
մանված հարկերը և ապահովագրական  
վճարումներ ե կատարում.

բ) անհրաժեշտ ծախսեր ե անում ար-  
տադրական ընթացիկ կարիքների համար,  
այն ե՝ դյուլատնտեսական գործիքների  
ընթացիկ նորոգումը, անառուների բու-  
ժումը, աղայքար վնասատուների դեմ և  
այլն.

գ) հողում ե արտելի վարչատնտեսական  
ծախսերը, այդ նպատակով հատկացնելով  
փողային յեկամուռների յերկու տոկոսից  
վոչ ավելին.

դ) միջոցներ ե հատկացնում կուլտուրա-  
կան կարիքներին, այն ե՝ բրիգադիներ և  
այլ կաղղեր պատրաստելու, մսուրներ կազ-  
մակերպելու, ռադիո դնելու և այլն.

ե) լրացնում ե արտելի անբաժանելի  
ֆոնդը՝ դյուլատնտեսական գործիքներ և  
անառուններ դնելու, շինանյութերի արժե-  
քը վճարելու և դրսից շինարարությանը  
ներգրավվող բանվորների հետ հաշիվ տես-  
նելու համար, դյուլատնտեսական բանկին  
յերկարատե վարկերի հերթական վճար-  
ները մուծելու համար, ընդ վորում հոգում  
անբաժանելի ֆոնդի հատկացնումներ ու լր-  
ացնումներ են կատարվում արտելի դրամա-  
կան յեկամուռների 10 տոկոսից մինչև վոչ  
ավելի քան 20 տոկոսի չափով.

զ) արտելի դրամական յեկամուռների մը-  
նացած ամբողջ գումարն արտելը բաշխում  
ե իր անդամների միջև, ըստ աշխորերի:

Ստացված բոլոր մուտքերն անպայման  
դրանցվում են արտելի մուտքի մատյան-  
ներում՝ վոչ ուշ քան ստացվելու որը:

Արտելի վարչությունը կաղմում է թե  
յեկամուսների մուտքի և թե՛ ծախսի մի-  
ջոցների տարեկան նախահաշիվ, վորն ու-  
ժի մեջ և մտնում միմիայն արտելի անդամ-  
ների ընդհանուր ժողովի կողմից հաստատ-  
վելուց հետո:

Վարչությունը միջոցներ կարող է ծախ-  
սել միմիայն այն հողվածների համաձայն,  
վորոնք նախատեսնված են նախահաշիվով:  
Վարչությանը չի թույլատրվում միջոցներն  
ինքնակամ կերպով փոխադրել ծախսի նա-  
խահաշիվ մի հողվածից մյուսը և միջոցնե-  
րը մի հողվածից մյուսը փոխադրելու հա-  
մար վարչությունը պարտավոր է ստանալ  
ընդհանուր ժողովի թույլտվությունը:

Արտելն իր աղաս դրամական միջոցները  
պահում է բանկում՝ իր ընթացիկ հաշվով  
կամ խնայողական դրամարկղում: Միջոց-  
ներն ընթացիկ հաշվից դուրս են գրվում  
միմիայն արտելի վարչության հրամանով,

վորը վավերական է արտելի նախադահի ու  
հաշվապահի ստորագրությամբ:

## VII

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ,  
ՎԱՐՉԱՏՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒ-  
ԹՅՈՒՆԸ

13. Արտելի տնտեսության բոլոր աշխա-  
տանքները կատարվում են նրա անդամների  
անձնական աշխատանքով համաձայն ընդ-  
հանուր ժողովի ընդունած ներքին կարգի  
կանոնների: Գյուղատնտեսական աշխա-  
տանքների համար վարձով թույլատրվում  
ե ողտագործել միմիայն այն անձանց, վո-  
րոնք ունեն մասնագիտական զիտելիքներ և  
պատրաստություն (աղբանոմներ, ինժեներ-  
ներ, տեխնիկներ և այլն):

Թույլատրվում է ժամանակավոր բան-  
վորներ վարձել միմիայն բացառիկ գեղ-  
քերում, յերբ շոտապ աշխատանքները հնա-

րավոր չե կատարել պահանջված ժամկետին արտելի անդամների առկա ուժերով՝ նրանց լիակատար ծանրաբեռնության դեպքում, ինչպես և շինարարական աշխատանքների համար :

14. Վարչությունն արտելի անդամներից ստեղծում և արտադրական բրիգադներ :

Դաշտավարական բրիգադներ են կազմվում առնվազն լիակատար ցանքաշրջանառության ժամանակի համար :

Դաշտավարական բրիգադին հողամասեր են հատկացվում ցանքաշրջանառության դաշտերում ցանքաշրջանառության ժամանակաշրջանի համար :

Դաշտավարական յուրաքանչյուր բրիգադին կոլտնտեսության վարչությունը հատուկ արձանագրությամբ ամրացնում և նրան անհրաժեշտ ամբողջ ինվենտարը, բանող անառունները և տնտեսական շենքերը :

Անասնապահական բրիգադները կազմվ-

վում են առնվազն յերեք տարի ժամանակով :

Արտելի վարչությունը անասնապահական բրիգադին ամրացնում և մթերատու անառունները, սպասարկման համար անհրաժեշտ ինվենտարը, քաշող ուժը և անասնապահական շենքերը:

Արտելի անդամների մեջ աշխատանքը բաշխում և անմիջականորեն բրիգադիրը, վորը պարտավոր և լավագույն ձևով ոգտագործել իր բրիգադի յուրաքանչյուր կոլտնտեսականի, թույլ չտալով վոչ մի խնամիություն և ընտանեկանություն՝ աշխատանքը բաշխելիս և խստիվ հաշվի առնելով ամեն ժեկի աշխատանքային վորակավորմը, փորձն ու ֆիզիկական ուժը, իսկ հղի կանանց և ծճմայրերի նկատմամբ նրանց աշխատանքը թեթևացնելու անհրաժեշտությունը, աղատելով նրանց աշխատանքից ծննդաբերությունից մի ամիս առաջ և ծննդաբերությունից մի ամիս հետո, պահպանելով այդ յերկու ամսվա համար

նրանց հասանելիքը՝ նրանց աշխորերի մի-  
ջին վաստակի կեսի չափով:

15. Գյուղատնտեսական աշխատանքները  
կատարվում են գործավարժի հիման վրա:

Արտելի վարչությունը մշակում է և կոլ-  
տնտեսականների ընդհանուր ժողովը հաս-  
տատում բոլոր գյուղատնտեսական աշխա-  
տանքների պլանը, արտադրանքի նորմանե-  
րը և յուրաքանչյուր աշխատանքի դնահա-  
տումներն աշխորելով:

Յուրաքանչյուր աշխատանքի համար  
սահմանվում են բարեխղճորեն աշխատող  
կոլտնտեսականին մատչելի արտադրանքի  
նորմաներ, հաշվի առնելով բանող անա-  
սունների, մեքենաների ու հողի դրու-  
թյունը: Յուրաքանչյուր աշխատանք, որի-  
նակ՝ մի հեկտարի վարը, մի հեկտարի  
ցանքը, մի հեկտար բամբակի բուկ տալը,  
մի տոնն հացահատիկի կալսումը, մի ցենտ-  
ներ ճակնդեղի հանումը, մի հեկտար վուշի  
գզելը, մի հեկտար վուշի թրջոցը, մի լիտր

կաթ կթելը և այլն, դնահատվում ե աշ-  
խորերով՝ նայած աշխատողից պահանջված  
վորակալորմանը, աշխատանքի բարդու-  
թյանը, գժվարությանը և արտելի համար  
ունեցած կարերությանը: Բրիգադիրն  
առնվազը շարաթը մեկ անգամ հաշվում ե  
արտելի յուրաքանչյուր անգամի կատարած  
ամբողջ աշխատանքը և սահմանված գնա-  
հատումների համաձայն կոլտնտեսականի  
աշխատանքային գրքույկում գրանցում ե  
նրա վաստակած աշխորերի քանակը:

Արտելի վարչությունն ամիսը մեկ անգամ  
կախում է արտելի անդամների ցուցակը,  
մատնանշելով նախորդ ամսում նրանց վաս-  
տակած աշխորերի քանակը:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխա-  
տանքի տարեկան արդյունքը և յեկամու-  
տը, բացի հաշվապահից, անպայման հաս-  
տատվում է բրիգադիրի և արտելի նախա-  
գահի կողմից: Արտելի յուրաքանչյուր ան-  
գամի վաստակած աշխորերի ցուցակը կախ-  
վում է ի գիտություն բոլորի՝ արտելի յե-

կամուսների բաշխումը հաստատող ընդհանուր ժողովից ամենառաջը յերկու շաբաթ առաջ:

Յեթե գաշտավարական բրիգադը լավ աշխատանքի չնորհիվ իրեն ամրացված հողամասից ստանում է միջին կոլտնտեսայինից բարձր բերք, կամ անտառապահական բրիգադը լավ աշխատանքի չնորհիվ ավագում է կովերի ավելի բարձր կաթնատվությունը, անասունների ավելի գերությունը և մատղաշների լիակատար պահպանումը, ապա արտելի վարչությունն այլպիսի բրիգադի բոլոր անդամների յեկամտի վրա հավելումներ և անում նրանց վաստակած աշխորերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով, բրիգադի աչքի ընկնող հարգածայիններին՝ մինչև 15 տոկոսի չափով, իսկ բրիգադի բրիգադի վարիչին՝ մինչև 20 տոկոսի չափով:

Յեթե գաշտավարական բրիգադը վաստականքի պատճառով իրեն ամրացված հողամասերից հավաքում է միջին կոլտնտե-

սայինից ցածր բերք կամ անասնապահական բրիգադն իր վատ աշխատանքի պատճառով տալիս է միջակից ցածր կաթնատվություն, անասունների գերություն և մատղացլպահանում, ապա արտելի վարչությունն այդպիսի բրիգադի բոլոր անդամների յեկամուսներից պահումներ և կատարումն նրանց վաստակած աշխորերի ամբողջ թվի մինչև 10 տոկոսի չափով:

Արտելի յեկամուսների բաշխումն անդամների միջև կատարվում է բացառապես արտելի յուրաքանչյուր անդամի վաստակած աշխորերի քանակի համաձայն:

16. Տարվա ընթացքում արտելի անդամների կարելի յէ զբաժական ավանս տալ վոչ ավելի, քան աշխատանքի համար նրան հասնող զումարի 50 տոկոսի չափով:

Վարչությունն արտելի անդամներին բընավճարով ավանս է տալիս հացահատիկը կալսելու սկզբից՝ կոլտնտեսության ներքին կարիքներին հատկացված 10—15 տոկոս կալսիած հացահատիկից :

Տեխնիկական մշակույթների ցանքով ըստ  
բաղկող արտելում արտելի անդամին դրա-  
մական յեկամուտը վճարվում է առանց ըս-  
տաբնելու, վոր վերջանա բամբակի, վուշի,  
կանեփի, ճակնդեղի, թեյի, ծխախոտի  
հանձնումը պետությանը, այլ հանձնելուն  
զուգընթաց, առնվազն շաբաթը մեկ ան-  
դամ՝ հանձնված արտադրանքի համար ար-  
տելի ստացած դրամի 60 տոկոսի չափով։

17. Արտելի բոլոր անդամները պարտա-  
վորվում են խստիվ պահպանել իրենց կոլ-  
տնտեսային սեփականությունը և կոլտնտե-  
սային դաշտերում աշխատող պետական մե-  
քենաները, աշխատել ազնվորեն, յենթարկ-  
վել կանոնադրության պահանջներին և ընդ-  
հանուր ժողովի ու վարչության վորոշում-  
ներին, պահպանել ներքին կարգի կանոն-  
ները, ճշտիվ կատարել վարչության ու բը-  
րիգագերի կողմից նրանց հանձնարարված  
աշխատանքը և հասարակական պարտակա-

նությունները, խստիվ պահպանել աշխա-  
տանքի կարգապահությունը։

Հանրային գույքին՝ անտնտեսորեն ու  
անսրտացալ վերաբերվելու համար, առանց  
հարդելի պատճառների աշխատանքի դուրս  
չգալու, վատորակ աշխատանքի և աշխա-  
տանքային կարգապահության ու կանոնա-  
դրության այլ խախտումներ կատարելու  
համար, վարչությունը մեղավորներին  
տույժի յի յենթարկում ներքին կարգի կա-  
նոնների համաձայն։ որինակ՝ կրկին կա-  
տարել տալ վատորակ կատարված աշխա-  
տանքն առանց աշխորերը հաշվելու, նա-  
խադրուշացում, հանդիմանություն անել,  
պարսավանքի յենթարկել ընդհանուր ժո-  
ղովում, բարձրացնել սե տախտակի, տու-  
ղանել մինչև հինգ աշխորի չափով, փոխա-  
դրել ցածր աշխատանքի, ժամանակավորա-  
պես հեռացնել աշխատանքից։

Այն դեպքերում, յերբ դաստիարակելու  
և պատժելու համար արտելի ձեռք առած  
բոլոր միջոցները չեն ներգործում, վար-

չությունն ընդհանուր ժողովում դնում է  
արտելի անուղղելի անդամներին արտելից  
վտարելու հարցը :

Վտարումը կատարվում է գյուղատնտե-  
սական արտելի կանոնադրության 8-րդ կե-  
տում սահմանված կարգով :

18. Հանրային կոլտնտեսային և պետա-  
կան սեփականության ամեն մի համաշա-  
կում, դեպի արտելի դռյան ու անասուննե-  
րը և մեքենատրակտորային կայանների մե-  
քենաները ցույց տրվող ամեն մի վնասա-  
րաբական վերաբերմունք արտելը դիտում է  
վորպես դավաճանություն՝ կոլտնտեսու-  
թյան ընդհանուր գործին և ոգնություն՝  
ժողովրդի թշնամիներին :

Կոլտնտեսային կարգերի հիմունքներն  
այդպես հանցավոր կերպով խախտելու  
համար մեղավոր անձինք արտելի կողմից  
դատի յեն արվում՝ բանվորագյուղացիական  
պետության որենքների ամբողջ խստու-  
թյամբ նրանց պատժելու համար :

### VIII

#### ԱՐՏԵԼԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

19. Արտելի գործերը կառավարում է  
արտելի անդամների ընդհանուր ժողովը,  
իսկ ժողովների միջև ընկած ժամանակա-  
միջոցում՝ ընդհանուր ժողովի ընտրած  
վարչությունը

20. Ընդհանուր ժողովն արտելի կառա-  
վարման բարձրագույն որդանն է :

#### Ընդհանուր ժողովը՝

ա) ընտրում է արտելի նախագահ և ար-  
տելի վարչություն, ինչպես և արտելի վեր-  
ստուգիչ հանձնաժողով, ընդ վորում վեր-  
ստուգիչ հանձնաժողովը հաստատվում է  
խորհուրդների շքանային գործադիր կո-  
միտեյի կողմից .

բ) կատարում է նոր անդամների ընդու-  
նելությունը և անդամների վտարումն ար-  
տելի կազմից .

գ) Հաստատում ե տարեկան արտադրական պլանը, մուտքի և յելքի նախահաշիվը, շինարարության պլանը, արտադրանքի նորմաները և աշխատանքի գնահատումն աշխորերով.

դ) Հաստատում ե մեքենատրակտորային կայանի հետ կնքվող պայմանագիրը.

ե) Հաստատում ե վարչության տարեկան հաշվետվությունը՝ վերստուգիչ հանձնաժողովի ոլարտաղիր յեղբակացության հետ միասին, ինչպես և վարչության հաշվետվությունները դյուզատնտեսական կարեվորագույն կամպանիաների վերաբերմամբ.

զ) Հաստատում ե զանազան Փոնդերի չափը և աշխորի համար արվելիք մթերքի ու դրամի քանակը.

է) Հաստատում ե արտելի ներքին կարգի կանոնները:

Կանոնադրության այս կետում թվարկված բոլոր հարցերի վերաբերմամբ արտելի վարչության ընդունած վորոշումներն

անվավեր են առանց ընդհանուր ժողովի հաստատման:

Ընդհանուր ժողովն արտելի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը ներկա լինելու դեպքում որինական ե՝ բոլոր հարցերը լուծելու համար, բացի արտելի վարչության ու նախագահի ընտրության հարցից, արտելի կազմից վտարելու հարցից և գանազան Փոնդերի չափին վերաբերող հարցից, վորոնք վորոշելու համար անհրաժեշտ ե, վոր ընդհանուր ժողովում ներկա լինի անդամների ընդհանուր թվի առնվազն յերկու յերրորդ մասը:

Ընդհանուր ժողովը վորոշումներ ե ընդունում ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

21. Արտելի գործերը վարելու համար արտելի անդամների ընդհանուր ժողովը յերկու տարի ժամանակով ընտրում ե վարչություն 5-9 հոգի կազմով, նայած արտելի մեծությանը:

Արտելի վարչությունն արտելի գործութիւնը որդանն է և արտելի անդամների ընդհանուր ժողովի առաջ պատասխանատառ յն արտելի աշխատանքի համար և ակտության հանդես արտելի պարտավորությունների կատարման համար :

22. Արտելի և նրա բրիգադների աշխատանքի ամենորյա դեկավարության, ինչպես և վարչության վորոշումների կատարման ամենորյա ստուգման համար արտելի ընդհանուր ժողովն ընտրում է արտելի նախագահ, վորը միննույն ժամանակ հանդիսանում է վարչության նախագահը :

Նախագահը պարտավոր է վարչության նիստ գումարել ամսական առնվազն յերես անդամ՝ ընթացիկ գործեցը քննարկելու և համապատասխան վորոշումներ ընդունելու համար :

Վարչությունը նախագահին ուղնելու համար վարչության անդամներից ընտրում է նախագահի տեղակալ, նախագահի առաջագրությամբ :

Նախագահի տեղակալն իր ամբողջ աշխատանքի մեջ յենթարկվում և նախագահի ցուցումներին :

23. Անասնապահական ֆերմաների բրիգադիներին ու վարչիներին նշանակում է արտելի վարչությունը՝ առնվազն յերես տարի ժամանակով :

24. Հաշվապահությունը վարելու և պույքի հաշվառումը կատարելու համար վարչությունն արտելի անդամներից ընտրում կամ վարձով հրավիրում է հաշվապահ : Հաշվապահը վարում է հաշվապահությունը և հաշվարկումը սահմանված ձևերով և ամբողջովին յենթարկվում է արտելի վարչությանն ու նրա նախագահին :

Հաշվապահին զոչ մի իրավունք չի տըրգում ինքնակամ տնօրինել արտելի միջոցները, ավանսներ տալ և ծախսել բնամթերքի Փոնդերը : Այդ իրավունքները վերապահվում են միմիայն արտելի վարչությանը և նախագահին : Արտելի ծախսի դրամական փաստաթղթերն ստորագրում են,

բացի հաշվապահից, նաև արտելի նախա-  
դահը կամ նրա տեղակալը:

25. Վերստուգիչ հանձնաժողովն ստու-  
գում և վարչության տնտեսական - Փենան-  
սական ամբողջ գործունեյությունը, ստու-  
գում և, թե դրամի ու ընամթերքի մուտ-  
քերն արդյոք սահմանված կարգով մուտք  
արված են արտելում, արդյոք սպահան-  
վի՞լ և միջոցները ծախսելու՝ կանոնադր-  
ությամբ նախառենուած կարգը, բայց  
ըստ հողատարությամբ սպահանվում է  
արդյոք արտելի գույքը, չկա՞ն արդյոք  
արտելի գույքի և դրամական միջոցների  
համբաւակումներ ու վատնումներ, ինչպե՞ս  
և կատարում արդյոք արտելն իր պարտա-  
վորությունները պետության հանդեպ, ինչ-  
պե՞ս և վճարում իր պարտքերը և ինչպե՞ս  
և դանձում իր ստանալիքներն արտելի պար-  
տապահներից :

Դրա հետ միասին վերստուգիչ հանձնա-  
ժողովը մանրադին ստուգում և արտելի  
բոլոր հաշիվներն իր անդամների հետ,

յերեան և բերում թերահաշվի, աշխորերի-  
վոշ-ձիչտ գրանցման, աշխորերի հաշիվ-  
ները ժամանակին չտեսնելու ամեն մի  
գեղք և արտելի ու նրա անդամների շա-  
հերի խախտման այլ գեղքեր :

Վերստուգիչ հանձնաժողովը վերստու-  
գում և կատարում տարեկան 4 անգամ :  
Վերստուգիչ հանձնաժողովը վարչության  
կողմից ընդհանուր ժողովին ներկայացվող  
տարեկան հաշվետվության առթիվ տալիս  
է իր յեղակացությունը, վորն ընդհանուր  
ժողովը լսում է վարչության հաշվետվու-  
թյունից անմիջապես հետո : Վերստուգման  
արձանագրությունը հաստատվում է ընդ-  
հանուր ժողովի կողմից :

Վերստուգիչ հանձնաժողովն իր գործու-  
նեյության համար հաշվետու յե արտելի  
անդամների ընդհանուր ժողովի առաջ :

Պատ . խմբագիր՝ Աշ . Ղազարյան  
Տեխ . խմբագիր՝ Լ . Ոհանյան  
Մրբագրիչ՝ Հ . Մանուկյան  
Կոնտրոլ սրբագրիչ՝ Յի . Տ-Մինասյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶ

1. Նպատակներն ու խնդիրները . . . . .	5
2. Հոդի մասին . . . . .	7
3. Արտագրության միջոցների մասին . . . .	10
4. Արտելի և նրա վարչության գործունեյությունը . . . . .	16
5. Անգամության մասին . . . . .	22
6. Արտելի միջոցները . . . . .	25
7. Աշխատանքի կազմակերպումը, վարձառությունների կարգապահությունը . . . . .	31
8. Արտելի ղործերի կառավարումը . . . . .	41

Գլավլիսի լիազոր՝ Ա-3069 . Հրատ . № 4542

Պատվեր 226 . Տիրաժ 20,000-

Թուղթ 62×94 . Տպագր . 1½ մամ .

Մեկ մամ . 15,360 նշան . Հեղինակ . 7/8 մամ .

Հանձնված և արտադրության 7 մարտի

1938թ .

Ստորագրված և տպագրության համար 11

մարտի 1938թ .

Գինը 25 կ .

Պետհրատի 1 տպարան , Յերևան . Լենինի 65

«Ազգային գրադարան



NL0204846

29.762

ԳԻՒԾ 25 Կ.

Примерный устав  
Сельскохозяйственной  
артели

Принятый вторым Всесоюзным съездом колхозников-ударников и утвержденный Советом Народных Комиссаров Союза ССР и Центральным Комитетом ВКП (б) 17 февраля 1937 г.

Гиз Арм. ССР. Ереван 1938 г.